

Թիւեր՝ որ քիչ առաջ տեսանք, որուն համաձայն Մովսէս վ. Տաթեւացի իր քարոզի գորգը Մեկքեւեթ կաթողիկոսին կը վերադարձնէ։ Անտարակոյս քարոզի գորգը քարոզողին ոտքերուն տակ կը փռուէր, եւ սկիհի գորգերը, որոնք շատ հաւանօրէն փոքր գորգիկներն էին, սկիհին տակ, խորանին վրայ։

Եկեղեցական գորգերը հաւանօրէն ապսպրանքով կը շինուէին, թէեւ արդէն շինուած գորգեր ալ ընդհանրապէս կը գործածուէին։ Նոր Զուղայի դիւանէն նամակ մը, 1721 թուականով (նկար 5), որոջ ցոյց կու տայ այս պարագան։ Նամակը ուղղուած է «Տեառնդ Մեծի Սրբազանի Մովսէս Ա(ստուա)ծուսուց Վարդապետիդ» եւ Մաշադէն գրուած, ըստ երեւոյթի՝ ի պատասխան Մովսէս վարդապետի նամակին։ Այս նամակին մէջ ի միջի ալլոց կ'ըսուի. «Եւ զարչէն էլ (գորգը) գլխիս վերայ կու շինեմ հը(ա)մ(ա)ն(ա)ցդ զուլուզն կուզ(ա)րկեմ. եւ ալ յայանի լինի հը(ա)մ(ա)ն(ա)ցդ զուլուզումն որ զալիչուն հ(ա)մ(ա)ր գրումն մէկ եւս գրել եւ օրինակն Բ(2) է եւ Գրիգորն (Գէրաքենց որ Սրբազանէն նամակ տանողն էր. Յ. Ք.) էլ մէկ զալիչայ է ասում. Բ(2) չէ ասում եւ ասումէ թէ ինձ անցել է թէ մէկ է, չՓաղաթ անէս գրես որ յիմանանք Բ(2) է թէ մէկ է. եւ դապն էլ գրես թէ չայի էլ թէ մուքասար»⁽⁹³⁾։ Ասիկա մօտաւորապէս կրնանք թարգմանել. «Եւ գորգն ալ պատրաստեցանք իմեզ կը շինեմ եւ հրամանքիդ միայն մէկ գորգի համար գրած էիր եւ երկու գորգի օրինակ զրկած ես, իսկ Գէրաքենց Գրիգորն ալ կը պնդէ թէ

յամեսանն Սեպտեմբերի Թ(9) յաւուր կիրակէի րարեկենդանի վերացման Սրբ. Սաշին. վասն որոյ ըստ բազում րարեւարութեանց եւ քաղցրութեանց եւ ընդունելութեանց որ ընդ մեր որդւոյն արարեալ էիք որ մեզ համանդամայն պատմեցաւ վ(ա)ս(ն) որոյ շնորհակալութիւնն առնեմք ձեր հրամանացէն եւ խնդրեմք սրբ. եւ մեծի Ամբողոցն րարեւարութեամբն ա(է)ր լիցի ձեզ վարձահատոյց եւ պատսպարող։ Նա եւս ԻԵ(25) թումն որ ԺԳ(13) եկեղեցոյն տուեալ էիք իւրեանց գրովն եւ մհրովն (կնիքովն) մեզ էհաս։ Այլ եւ մէկ ձեռք սցեստ որ Մէլայանի եկեղեցումն էին տուեալ, մէկ սկի լուսաւորչին եկեղեցումն էին տուեալ, մէկ սկի Թարվիզցոց եկեղեցումն էին տուեալ, մէկ արծաթի աջ անուամբ Թաղէոսի Առաքելին Ղարա Մէլիքէնց եկեղեցումն էին տուեալ, մէկ սցեստ Շահվիլէնց եկեղեցումն էին տուեալ, մէկ արծաթի աջ անուամբ Բարդուղիմէոսի Առաքելին, մեր Յոհան վ(ա)րդ(ա)պ(ե)ան էր շինել տուած. ձեր եկեղեցեաց եւս Դ(4) գաւազան, եւ Կ(60) մահրամայ (թաշկինակ), 2(6) սկուհ մահրամայ, Դ(4) սկու խալիչա, Ժ(10) Ա(ստուա)ծաշնչի հայելի գիրք, Դ(4) Աւետարան, մէկ խորհրդատետր, Բ(2) շարական, մէկ զատ մանդիլ (արծաթթէլ թաշկինակ), 2(6) թասակ արախի (զդակ), մէկ քարոզի խալիչայ, մէկ դումաշ (կերպաս չորջարցու, մէկ զալածքար չիթ (աւրպածոյ) աւազանի ծածկոց։ Չայս ամ(ենայն համանդամայն ձեռամբ մեր հոգէծին սիրելի որդի Յոհան վ(ա)րդ(ա)պ(ե)տիւն մեզ եւ առ Սր. Աթոռ էհաս, վ(ա)ս(ն) որոյ բազում ուրախութիւնն տիրեաց մեզ, եւ շնորհակալ եղաք ի ձէնձ ուրեմն չէն մնաք եւ ասող՝ Տ(է)ր Քս. ձեր հրամանաց կար եւ կարողութիւնն տացէ, եւ զիտխարէն րարեւարութեանց ձերոց. ասջիք հատուցումն րարեաց պարգևողէն։ Եւ զժողովուրդս ձեր չին եւ հաստատուն մնացեն անասան կենօք յերկարակեց ամանակաւ, եւ զոր ինչ նուէրք եւ սղորմութիւնն որ շնորհացին Սրբ. Աթոռայ, արխուրն ի (տեսուն) տացեն։ Եւ յետ աստեացս ելանելոյն արժանիս արասցէ ար. քս. քաղցր տեսութեան իւրում եւ լսել տացէ զերանական ձայնն թէ եկայք օրհնելաք հօր իմոյ։ որ է օրհնեալ միշտ յաւիտեանս Ամէն։ Գրեցաւ ԹՃԶԸ (1739) յամեսանն Սեպտեմբերի Ի եւ Բ (22) ի դրան Սր. Կարապետի, որ ի յերինջակն։

⁽⁹³⁾ Քիւրտեան լուսանկար, Ծրար V Նոր Զուղայի դիւան։